


ՀԱՅ ՄԻԷՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԳ, ԱՊՐԻԼ 5, 1930

ԹԻԻ 7



ԹՈՐԵԼՆԱՐ ՓՐՈՖ. Յ. Գ. ԴՐԻԳՈՐԵԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՔՈՔԻՆԻՈՅ (Աթէնք) Հայ Աւետ. Ե-
կեղեցիին հովիւը Պատ. Գրիգոր Տէմիր-
ճեանի նամակէն քաղուած աբար. —

Վեր. Փափազեանը առաջին անգամ լսելու պատեհութիւնը վայելեց Գործինիոյ եկեղեցին՝ Փետր. 16 ի Կիրակին, իւր մարգարէաշունչ քարոզէն առաջ նրբաճաշակ նորաշէն ամպիոնին բացումը կատարեց ան. Տիկ. Մ. Թօփալեանի առաջնորդութեամբ երգեցիկ խումբի երգերը մեծապէս աւելցուցին արդէն իսկ ստեղծուած հոգեշունչ մթնոլորտին ազդեցութիւնը: Վարդանանց տօնին առթիւ Ե. Բ. Զանից Միութեան կողմանէ սարքուած հանդէսին մէջ Վեր. Մ. Փափազեան մէկ ժամէ աւելի խօսեցաւ վերացուցիչ ուժգնութեամբ մը. Պատ. Մ. Րէնճիլեան այդ առթիւ ըրաւ կարճ և իմաստալից ուղերձ մը: Մարտ Տին Գոնքինիոյ եկեղեցիին մէջ Վեր. Փափազեանի ի պատիւ թէյասեղան մը տրուեցաւ մասնակցութեամբ Աթէնքի մօտաւորապէս 250 հոգեւոր գործիչներու: Սկսեւ լին առաջ մէկ ժամ տեւող խիստ տպաւորիչ հոգեւոր պաշտօն մը կատարուեցաւ: Թէյասեղանի լմննալու պահունք Փրոֆ. Լ. Լեոնեան յայտնելէ ետքը թէ Վեր. Փափազեան Աթէնքի մէջ հոգեւոր մթնոլորտ մը ստեղծեց՝ ըսաւ. «եկեղեցիներ ինկան, բայց եկեղեցին տակաւին կանգուն է»: Ապա Վեր. Կ. Սթանպօլլեան յուզիչ շնչոտերով շնորհակալութիւն յայտնեց Վեր. Փափազեանի, և յանուն Աթէնքի Հայ Աւետ. Համայնքին Ակրոպոլիսի երկու նկարները նուիրեց անոր: Վեր. Փափազեան ամէնուն սէրը իրեն գրաւեց իր հմտութեամբը, պերճախօսութեամբ, առողջ նկարագրովը և խորքիստոնէական փորձառութեամբը: «Դուն բարեք արարեր զի եկիր:»

ՎԵՐ. Ս. ՄԵԼԳՈՆԵԱՆ իր գրած մէկ
նամակին մէջ կը յիշէ թէ ՎԵՐ. Փափազ-

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, ԱՊՐԻԼ 5, 1930

ԹԻԻ 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԹԱՆԱՍՈՒՆ ՀՆԳԱՄԵԱԿԻ ՄԸ ԱՌԹԻԻ


Փրոֆ. Յ. Գ. Գրիգորեանի ծննդեան 75րդ տարեդարձին առթիւ կատարուած յարգանքի և գնահատումի ցոյցին նըկարագրութիւնը մեծ հրճուանքով կարդացինք «Րահնիւմա»ի և «Կոչնակ»ի մէջ: Մենք իրական հաճոյք մը կ'զգանք նոյն նպատակին յատկացնելով «Նոր Աւետարեր»ի ներկայ թիւը, որուն մէջ ձեռնհաս իրաւասութեամբ կը խօսին իր նախկին սաները, գործակիցները, բարեկամները, նեղ սահմանի մէջ ներկայացնել ջանալով Փրոֆ.ը այնպէս ինչպէս որ ճանչնալու առիթը ունեցած են զայն:

Այս առթիւ յայտնելով հանդերձ մեր խորին յարգանքը Փրոֆէսորին հանդէպ, կ'ուզենք յիշել միայն կէտ մը քաղուած նոյնիսկ անոր կեանքէն: Հայութեան խռոշոր մէկ զանգուածը թրքախօս դարձած էր երկարատեանէ իվեր, դժբաղդ պարագաներու տակ: Հայ մամուլին բացարձակ մեծամասնութիւնը հայերէն ըլլալով չէր կրնար օգտակար հանդիսանալ ատոնց, որոնք հոգեւորապէս և մտաւորապէս զարգանալու

մէկ մեծ միջոցէն զրկուած պիտի մնային եթէ հայատառ թրքերէն թերթեր չզգտնուէին: Ահա Փրոֆ. Գրիգորեան եկաւ իր «Րահնիւմա»ով այս անժողովրդական բայց կարեւոր դերը կատարողներէն մէկը ըլլալ, հոգեւոր և մտաւոր առողջ

սնունդ ջամբելով թրքախօս Հայութեան: Գրիգորեանի նման բեղուն միտք մը շատ աւելի կարեւոր դերք մը պիտի զրաւէր հայ հրապարակագրութեան մէջ եթէ ան հայերէնով գրած ըլլար: Բայց ան այս լքուած մասին մօտեցաւ, անոր սրտին խօսեցաւ, մտքին սնունդ տուաւ, անոր հասկնալի լիզուով, իբր իրատես տպագրատէր մը: Եւ երբ քննադատուեցաւ ասոր համար, ան պատասխանեց արձագանգը ըլլալով այն ձայներուն՝ որոնք կ'աղաղա-

կէին. «Մի՛ դադրեցնէք մեր սնունդը»: Ամէն յարգանքի և շնորհակալութեան արժանի է ան որ տակաւին պատնէջին վրայ կը գտնուի ծառայելով այն դասակարգին, որ իր սնունդը, դժբախտաբար միմիայն թրքերէնով կրնայ ստանալ:



(ՎԵՐ. Յ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, 1880)

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ

(Գրեց՝ Տր. Ճ. Է. Մերիլ)

Ինձմէ աւելի Փրոֆ. Գրիգորեանի սաները կրնան իբր ուսուցիչ անոր բարեմասնութիւններուն մասին պատմել և սակայն ինծի համար մեծ հաճոյք մըն է զրել իմ տպաւորութիւններէս ոմանք այնպէս ինչպէս որ ես պոյն Այնթապի մէջ ճանչնալու առիթը ունեցած եմ: Ես զայն կը յիշեմ իբր շատ պատրաստակամ գործող մը իր կրցած բոլոր գործերը կատարելու, իբր շատ հիւրընկալ միտք մը նոր գաղափարներու և իբր շատ օգտակար ժողովական մը Գոլէճի ուսուցչական ժողովի խորհրդակցութեանց մէջ: Ասոնք արդիւնքներն էին անոր զոր կարելի է «պատրաստ միտք» կոչել:

Անոր միտքը շատ բազմակողմանի էր, և միևնոյն ատեն նոր գաղափարներու բերրի դաշտ մը: Ասիկա շատ յայտնի կերպով տեսնուած է «Րահնիւմա»-յի իր խմբագրութեան մէջ, և նոյն յատկութիւնը իբր ուսուցիչ ազդու և թելադրիչ դիրք մը ապահոված է իրեն համար: Անիկա գաղափարներով լեցուն էր, և գաղափարներուն՝ զործողութիւն կ'ընկերանար, եթէ ըլլար բան մը զոր ինք պարտ կ'զգար կատարել:

Այլ աւանդական դարձած էր սա պարագան թէ հոգեբանութեան դասերը զրեթէ ամէն աշակերտին մտածումներուն և հայեացքներուն մէջ մեծ փոփոխութիւն մը յառաջ կը բերէին: Ասիկա ծագում առած էր Փրոֆ. Գրիգորեանի կողմանէ հոգեբանութեան ուսուցումովը: Ան լաւ գիտէր թէ ինչպէ՞ս կարելի էր մեր ներքին կեանքին ուսումնասիրութիւնը կենսական, զործնական, արժէքաւոր, հրապուրիչ ընել: Նախկին սաներէն քանիներ կը վկայեն ասոր:

Գիծ մ'ալ: Օր մը քաղաք երթալու ատեն ինծի լաւ ծանօթ մէկու մը հանդիպեցայ: «Գիտէ՞ք, ես ապաշխարած եմ» ըսաւ մէկէն իմէկ, և ապա պատմեց իր պատմութիւնը, զոր սապէս վերջացուց. «Անիկա մէկ արդիւնքն է Յովհաննէս խօճաի մէկ քարոզին, զոր նա ութը տարի առաջ խօսած էր (Այնթապ) Ա. Աւետ. Եկեղեցիին մէջ:»

Փրոֆ. Գրիգորեանի բոլոր բարեկամները ամէն բարիք կը մաղթեն իրեն համար իր ծննդեան այս տարեդարձին առթիւ:

ՓՐՈՖ. Յ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

(Գրեց՝ Փրոֆ. Զ. Ա. Պեգնեան)

Փրոֆ. Յ. Գրիգորեանի հետ մեր յարաբերութիւնը շատ կանուխէն կ'սկսի: Առաջին անգամ իրարու ծանօթացանք 1870ին, Մարաշի Աստուածաբանական Ճեմարանին մէջ, ուր ան՝ հօրս ինծի համար որոշած ուսուցիչներէն մէկն էր: Երկրորդ ուսուցիչս էր Փրոֆ. Սարգիս Լեոնեան: Այս երկուքն էին դարձեալ, որ 1876-1880ին Գոլէճի ուսանողութեան առաջին տարիներուն մէջ զլիսաւոր ուսուցիչներս կը կազմէին: 1887ին է որ

Գրիգորեանի և Լեոնեանի հետ իբր ուսուցիչ Գոլէճի մէջ կ'սկսի մեր երկար ընկերակցութիւնը, որ շարունակեց մինչև Գրիգորեանի Կ. Պոլիս մեկնումը (1902) և Լեոնեանի Սաղկէչիտի մէջ նահատակումը (1909 Ապրիլ 15): Կրնանք ըսել թէ նախկին (հանգուցեալ) Կ. Թ. Գոլէճին ոսկեգարը կը կազմէ այս շրջանը, որուն զլիսաւոր ներկայացուցիչներն էին Փրոֆ. Ա. Պեգնեան, Փրոֆ. Ս. Լեոնեան, Փրոֆ. Յ. Գրիգորեան և



Կ. Թ. ԳՈՂԷՃԻ 1897Ի ԸՆԹԱՑԱԽԱՐՏ ԿԱՐԴՆ

Նստողներ (Գողէճի փրօֆէսորներ) ձախէն՝ Վեր. Մ. Փափազեան, փրօֆ. Զ. Պէզնեան, փրօֆ. Ա. Պէզնեան, նիսգհ. Տր. Ֆուլլըր, փրօֆ. Յ. Գ. Գրիգորեան, փրօֆ. Ս. Լևոնեան: Ոտքի վրայ (աշակերտ) առաջին շարք, ձախէն՝ Սէմիկեան (վկայական չէ ստացած), Տրքթ. Ե. Ա. Պէզնեան, Տրքթ. Յ. Պարսումեան, Ե. Խօճա Տէր Գրիգորեան, Ա. Խօճա Պէրպէրեան, Տրքթ. Փառնակ Աղամեան, երկրորդ շարք ձախէն՝ Տրքթ. Յր. Պապիկեան, Երուանդ Շիշմանեան, փրօֆ. Մ. Անանիկեան, փրօֆ. Ճ. Մաթոսեան, Տրքթ. Կ. Պապիկեան, Յովհ. Շիշմանեան:

Վեր. Մ. Փափազեան: Այս չորս պատկառելի անձերը, որոնք շատ մը տեսակետներով իրարմէ այնքան կը տարբերէին և որոնցմէ իւրաքանչիւրը իրեն յատուկ որոշ անձնաւորութիւն մը ունէր, բայց սրունք նպատակի և ձգտումի մէջ կը միանային, նախկին Գողէճի մէջ կը ներկայացնէին մեր ամէնէն աւելի գնահատած և սուրբ նկատած բարձր գաղափարականները: Կարծես թէ այս չորսերը զարմանալի միութիւն մը կը կազմէին: Այս օր անոնցմէ երկուքը մեր մէջէն բաժնուած են. փառք Տէրօջ երկուքը տակաւին մեզի հետ են: Կը

մաղթենք որ Աստուած շատ մը տարիներ շնորհէ Գրիգորեանի և Փափազեանի, որ անոնք տակաւին երկար ատեն մեր մէջէն անպակաս գտնուին իրենց գրիչներով ու խօսքերովը:

Անկարելի է մի քանի տողերով պատկերացնել փրօֆ. Յ. Գրիգորեանը, որուն միայն մի քանի գիծերը կ'ուզեմ շեշտել այս առթիւ:

Նախ՝ անոր քաջութիւնը: Գրիգորեան անկեղծ մէկն է և ճշմարտութեան անվեհեր մէկ ախոյեանը. անիկա երբեք չի վախնար ճշմարտութեան խօսելէ և գրելէ. ճշմարտութեան ետեւը երկաթի պէս

հաստատ կը կենայ: Անկարելի է զայն հրապուրել կաշառքով կամ սպառնալիքով. ամէն ազմուկ զինքը լռութեան չի կրնար մատնել: Դիւրութեամբ վիճաբանութեան չի մտնել, բայց երբ անգամ մը պարտականութեան զգացումով անոր մէջ նետուի զիւրութեամբ ալ անկէ ետ չի քաշուիր: Համիտի լրտեսները, Սենեքերիմի ժողովուրդները, ոստիկանութեան գոյ կառքերը և սպառնալիքները չկրցան զայն վախցնել: Անշուշտ իր այս անվախութեան զլխաւոր ազբիւրն էր իր այն անսասան հաւատքը, զոր ան ունէր իրաւունքի, ճշմարտութեան, պարտականութեան և մէկ խօսքով այս ամբողջին ազբիւրը եղող Աստուծոյ վրայ: Փրոֆ. Գրիգորեան իր ծնողներէն ժառանգած է շատ զօրաւոր կամք մը, զոր կատարեալ հաւատարմութեամբ կրցած է պահել: Դիւրութեամբ չեւ կրնար զայն ետ կեցնել այն ճամբէն որուն հետեւիլ որոշած է: Ասոր լաւագոյն փաստն է «Բահնիւմա»ի հրատակութեան մինչև այսօր շարունակութիւնը:

Գրգորեան միշտ մեծցող, երիտասարդ մնացող գրող մը եղած է մտաւորական մարզին մէջ: Անիկա միշտ ընթերցող, գաղափարային հոսանքները միշտ հե-

տապնող, մէկ խօսքով ծեր երիտասարդ մը եղած է: Ծերացած ծերունիներ շատ ունինք, և այս դարուս մէջ, աւաղ, անպակաս են ծեր երիտասարդներ, որոնց թիւը կ'աւելնայ, բայց երիտասարդ մնացած ծերեր հազուագիւտ են: Փրոֆ. Գրիգորեան այս հազուագիւտներէն մէկն է: Անիկա արդարութեան եւ ճշմարտութեան միշտ բաց սիրտ մը և գրիչ մը ունի, թիւրիմացութենէ և չարամիտութենէ ազատ, վստահելի դատողութեան տէր, լայնամիտ մէկն է և միշտ պատրաստ՝ ընդունելու ճշմարտութիւնը ուր և որ ու մէջ որ զայն տեսնէ, այսուհանդերձ շատ զգուշաւոր և սրտ չափով մը պահպանողական՝ իր հին համոզումները փոխելու կամ բարեփոխելու մէջ: Ահա այսպէս ան առաջնորդ մը եղած է որ կը ներկայացնէ թէ՛ ժ.թ. և թէ՛ ի. դարը: Իր «Բահնիւմա» թերթով յաճախ վստահելի ռահվիրայ մը եղած մեր եկեղեցիներուն և մեր ազգին: Ազգային հարցերու մէջ Հայութեան խոշոր մէկ մեծամասնութիւնը կազմող ողջամիտ դասակարգին վստահելի մէկ ներկայացուցիչը, հաւատարիմ մէկ թարգմանը եղած է, իր հեռատեսութեամբը, լայնամիտութեամբը և առողջ դատողութեամբը:

ՀԱՒԱՏԱՐԻՄ ԳՈՐԾԻՉ ՄԸ

(Գրեց՝ Աստուարոյթ Տիար Գրիգոր Սարգիսեան)

Վեր. Յ. Գ. Գրիգորեան շատ մը տաղանդներով ծնած անձնաւորութիւն մըն է, որ արժանի է իբր օրինակ ընդունուելու:

Անիկա մեր մէջ «եղիֆ ֆեյիսի» (ծանրութիւն կրող ուղտ) կը կոչուէր. քանզի կ. թ. Գոլէճի մէջ իր ունեցած պարտականութիւններէն զատ շատ մը զործեր կ'ստանձնէր, որոնց շարքին կրնայ յիշուել Այնթապի Ա. եկեղեցիի քարոզչական-հովուական պաշտօնը՝ զոր սիրով կատարեց երբ երկու անգամ բեմը թափուր մնացած էր, նոյն եկեղեցիի կրօնա-

կան ժողովին և դպրոցի հոգաբարձութեան մէջ իր առաջնորդողի գերը՝ զոր անսպառ եռանդով կը կատարէր:

Ա. և Բ. եկեղեցիներուն երբ յարաբերութեանց մէջ դժուարութիւններ ծագէին հարցը իրեն կը յանձնէինք և իր որոշումները յարգանքով կ'ընդունէինք:

Մեզի՝ մանաւանդ նոր սերունդին կ'արժէ որ օրինակ ըլլան իր բոլոր կեանքին մէջ ցուցուցած իր հոգին, ճշմարտասիրութիւնը, քաջութիւնը, անկեղծութիւնն ու միշտ երիտասարդ մնացող միտքը:

ՏԻՊԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿ ՄԸ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ ՄԸ

(Իրեց՝ Վեր. Կ. Յարութիւնեան)

Կ. Թ. Գոլէճի մէջ չորս տարի եւ Աստուածաբանական Ճեմարանի մէջ վեց ամիս իւր ուսանող առիթը ունեցայ զինքը վայելելու։ Անգլերէն, զերգրատութեան, տրամաբանութեան եւ հոգեբանութեան դասեր առած եմ իրմէ։ Հիմա ինծի ինչպէս շատերուն թանկագին եղող շատ մը հոգեւոր երգերը քննոր երգել սորվեցայ իր ղեկավարած երգիչ խումբին մէջ։ Մեզի ինք կը սորվեցնէր ատենախօսութեան մէջ գիրքի, շարժումի եւ ձայնի գործածութեան վերաբերեալ կարեւոր կէտերը, որոնց համար լաւագոյն օրինակելի տիպարը ինքն էր։ Քրիստոնէական վարդապետութեան վերաբերեալ նիւթերը այսպէս յստակօրէն, համարձակ կերպով, եռանդով, տրամաբանօրէն եւ դիւրահասկնալի կերպով կը դասախօսէր, որ կրօնական հարցերը չը սիրել անկարելի էր բաց միտք ունեցող եւ ճշմարտասէր մէկուն համար։ Այս դասը իրմէ առնելու օգուտն ու արժէքը աւելի լաւ հասկցայ Աստուածաբանական Ճեմարանի երթալէ ետքը։

Աստուածաբանական դպրոցը այն հաստատութիւնն է, որ զիտական ուսումնասիրութեան եւ քննութեան կ'ենթարկէ կրօնական հարցերը։ Հոն հոգեւոր եւ մտաւոր ճշմարտութիւնները կը զննուին, կը դասաւորուին։ Հոն ազատ, բաց, անվախ սիրտ եւ միտք պէտք է, Աստուծոյ հաւատալ պէտք է։ Այս տեսակէտով մեծ տարբերութիւն կը տեսնուէր Այնթապի Գոլէճէն եւ ուրիշ գոլէճներէ եկող աշակերտներու մէջ առաջին տարուան միջոցին։ Բարձրագոյն քննադատութիւն, բնաշրջում, ներշնչումի մէջ աստիճանական զարգացում եւ այն բառերն միայն անոնց միտքը կը յուզեն կամ հաւատքը կորսնցունենու

վախը կ'ազդեն, որոնք նախապէս Փրոֆ. Գրիգորեանի նման ուսուցչին հետ քովը չեն գտնուած։ Ես երբեք անհանգիստ չեղայ մինչ ուրիշները կը տարուէին խորհելու թէ կրօնքը խախտու հիմ մը ունի, քանզի Փրոֆ. Գրիգորեանէ լսած էի յիշեալ տեսութիւններու զոյտութիւնը։ Քանզի Փրոֆ. Գրիգորեանի քով գտնուած միջոցիս լսած, սորված եւ այնպէս ալ ապրած էի թէ քրիստոնէութիւնը անոնցմով չի յնար, Ս. Գիրքը անոնցմէ չի վախնար, հոգեւոր կեանքը, որ խորանիստ հիմ ունի, այսպիսի հոսանքներէ չ'ազդուիր, կրօնքի, եկեղեցիի, Աստուծոյ վրայ հաւատքի շէնքը այնքան ամուր հիմերու վրայ դրուած է որ ան երբեք չի կործանիր, նոյնիսկ եթէ անոր քարիւղէն ոմանք իրենց տեղէն շարժին։ Այդ օրէն իմիր սկսած էի ողորմիլ այսպիսի հարցերէն վախցողներու եւ յուզուողներու վրայ։

Աստուածաբանական Ճեմարանի դասը, ուր Փրոֆ. Գրիգորեան առժամեայ կերպով մեր կարդին եկեղեցական պատմութեան դասը աւանդեց։ Մինչ այս թանկագին նիւթը իր առաջնորդութեան տակ կ'ուսումնասիրէինք՝ մեր աչքերուն առջև աւելի ընդարձակ կերպով պարզուեցան պատմութեան տարբեր շրջաններուն մէջ քրիստոնէական եկեղեցիին առած քայլերը, ճշմարտութեան եւ Յիսուս Քրիստոսով Աստուծոյ յայտնուելուն կերպերը եւ աստիճանները։ Փրոֆ. Գրիգորեան երբեք չյօժարեցաւ որ մեզի յանձնուած դասալրջերուն կապուած մնանք։ Իր դասախօսութեան կարճատեւ շրջանին մէջ աչքէ անցուց, կարդաց մեր աննման գրադարանին մէջ այս նիւթին վերաբերեալ բոլոր գրքերը, որոնցմէ օրուան նիւթին համեմատ ընտրուած

մասերը մեզի կուտար կարգալու. ապա ինքը անոնց մասին մեզի բացատրութիւններ կ'ուտար: Այսպէս Եկեղեցական պատմութիւնը մեզի սիրելի դարձուց: Ինքը կատարելապէս հմտացած էր անոր, և կ'աշխատէր որ մենք ալ լւարացնենք զայն, անկասկածելի է որ յաջողեցաւ իր այդ ջանքին մէջ:

Այդ տառնէն ի վեր ինծի համար շատ նուիրական դարձած և ուսումնասիրութեանս կարեւորագոյն առարկաներէն եղած էին քրիստոնէութեան զարգացման պատմութիւնը, անոր բարձր վարդապետութիւնները, Բողոքականութեան հիմնական կէտերը, որոնցմով ան կը տարբերի միւս եկեղեցիներէն և որոնք իր առաւելութիւնները կը կազմեն, և վերջապէս այն հիմնական ճշմարտութիւնները, որոնց միջոցաւ Բարեկարգութիւնը մեծ և բարեբար արդիւնքներ յառաջ բերաւ Եկեղեցիին մէջ:

Փրոֆ. Գրիգորեանէն միայն գտնաբաններու մէջ չ'օգտուեցանք: Երբեմն, գիշերները, բոլոր կարգով անոր սենեակը կ'երթայինք եւ ժամերով կը խօսակցէինք հրաշքի, Ս. Երրորդութեան, նախախնամութեան, քառութեան և նշման հարցերու մասին: Ինքը միշտ մեզի կ'ընկերանար ճաշի պահուն զոր շատ զբօսալի կերպով կ'անցնէինք, եւ ճաշէն վերջ առօրեայ մտածումներ պարունակող զրքէ մը մեզի հատուածներ կը կարդար: Այն պահերը անմոռանալի են:

Տասն և մէկ տարուան, հովուական գործունէութենէ մը վերջ երկու տարի Անգլիոյ կրթութեան հռչակաւոր կեդրոններէն Օքսֆորտ քաղաքը գտնուեցայ ուսումնական կատարելագործելու համար: Բնականաբար փիլիսոփայութեան, աստուածաբանութեան եւ ուրիշ կրօնական ուսումնիրու մէջ շատ նշանաւոր և կարող ղեմքերու հանդիպեցայ, որոնց դասախօսութիւններուն մտիկ ըրի և երկերը ուսումնասիրեցի: Հոն

գտնուած պահուս ալ համոզուեցայ որ Փրոֆ. Գրիգորեան, լայնամիտ, ազատամիտ, միշտ արդիական ուսուցիչ մըն է: Հոն գտնուած պահուս դարձեալ, հայրենիքէս մտերմական նամակ մը ստացայ, որ Գրիգորեանի մասին 5-10 հարցումներ կը պարունակէր, և որով անոր մասին իմ կարծիքս հասկնալ կ'ուզուէր: Ձեռ գրուեց թէ նամակագրութեամբ պատասխանէս անոր թէ չէ: Բայց խորհելով որ շատ մը տարիներ անցնելէ վերջ ալ անկա իր մտերմական հանգամանքը կորսնցուցած է տուած պատասխաններէս մէկը յիշեմ: «Վեր. Յ. Գ. Գրիգորեան կը ճանչցուի իբր Գիլիկիոյ մէջ շատ սիրուած եւ յարգանքի արժանի անձնաւորութիւն մը, աշխատասէր, ճշմարտասէր ուսուցիչ մը, քարոզիչ մը, անկեղծ բարեկամ մը, արիւստիտ հոգի մը: Վերջը ճանչցողներու կողմանէ, մինչեւ վերջը այդպէս ալ պիտի ճանչցուի:»

Ձեռ կրնար Փրոֆ. Գրիգորեանը մոռնալ նաեւ իբր բեմի մարդ: Իմ Գոլէճ գտնուած առաջին տարիս ինքն ալ Ամերիկայէն գրեթէ նոր դարձած էր. այն ատեն ես և նմաններս շատ բան չէինք հասկնար իր քարոզներէն և ատենախօսութիւններէն, քանզի անոնց մէջ աւելի փիլիսոփայութիւնէն կը ճառէր, և ուսկից որ ալ սկսէր իր խօսքերը գաղափարով կը ծանրաբեռնէր: Եւ ինչպէ՞ս մէկը կարենայ շօշափելի օգուտ մը քաղել լսելով իր փորձառութեան տակ չինկած նիւթերու մասին: Բայց այդ ատենն իսկ բեմի վրայ անոր կեցուածքը, կերպարանքը, շարժումները, ձայնը և անկեղծութիւնը զիս կը հրապուրէին, և յաճախ մտքէս կ'անցնէր իրեն պէս խօսող մը ըլլալու փափաքը:

Վերջին տարիներուս, երբ իր կեանքին և գաղափարներուն աւելի տեղեկանալու առիթը ունեցայ, ինծի համար հոգեկան խնջոյք մը կը նկատէի անոր



Մարաշի Աստուածաբանական առաջին ուսումնականներու և աշակերտներու խումբ մը, 1900? Այնթապ. ձախէն նստողներ Վեր. Դ. Գասարճեան (*1926), Պատ. Ա. Տ. Կարապետեան (*...), Յրթ. Աղա Շնորհաքեան (*1920), Վեր. Յ. Գունտադեան (*1909), կայնողներ՝ Փրոֆ. Յ. Դրիգորեան, Փրոֆ. Ս. Լեւոնեան (*1909), Վեր. Յ. Գումրուեան, Յ. Աղա Մանուկեան (*...):

Աստղանիշ կրողները նահատակուած կամ մեռած են:

ճառերուն և քարոզներուն մօտիկ ընել:

Կարծեմ իբր տիպար նկարագիր ալ պէտք չէ մնցած ուէ գիծ մ'ալ աւելցնելու անոր վրայ: Ամէն տեղ և ամէն պարագաներու տակ զինքը կը ճաշնամ իբր անկեղծ, կենցաղագէտ, անվախ, ճշմարտասէր, համբերող, հաւատքի տէր, զուարթ, լուստես, նախախնամութեան հաւատացող անձ մը, բարեկամ մը, գիտուն մը: Նոյն իսկ իր յանգիմանած և պատժած աշակերտները զինքը կը յարգէին: Անցեալ օր վաճառական մը, որ քանի մը տարի Գոլէճ գտնուած էր, սապէտ վկայեց. «Իբր արիասիրտ, մաքուր և ազնուահոգի անձ առաջին անգամ միտքս եկող մարդերէն մէկն է Փրոֆ. Դրիգորեան» Բոլոր աշակերտները կը հաստատեն այս վկայութիւնը:

Որչափ որ կը յիշեմ Փրոֆ. Դրիգորեան միայն մէկ բանի մէջ ձախող գրտնուեցաւ: Դպրոցին մէջ ուսումնական պահերէն մէկը, գեղագրութեան յատկացուած էր սովորութեան համեմատ: Ես ալ մէկն էի այն աշակերտներէն որոնք թրքերէնը չէին սիրեր և կը խորհէին թէ անոր պէտք չունին: Իր հսկողութեան կարգն ալ ճիշդ այդ պահուն կը հանդիպէր: Գրասեղանին առջեւէն կ'ենլէր, պտըտելով մեր քովը կուգար, խոշոր աչքերը մէյմը սա մէյմը ան կողմը կը դարձընէր և պատկառազգու ձայնով մը կ'ըսէր. «Ո՛ր է, Կարապետ, գիր չես գրեր»: Երբ ես կը պատասխանէի, «Փրոֆէսոր, գրեցի, ահա պիտի գրեմ», ինք կը շարունակէր, «Սկսէ տեսնեմ, հանէ գրիչը, թուղթը և շուտ գրէ»: Ես ալ գրածս

կը հանէի զոր ան կը քննէր ու կ'ըսէր. «Ե՛, լաւ, եթէ աշխատիս լաւ օսմանե-
րէն պիտի կրնաս գրել. ջանա, հաճախ
պէտք կ'ըլլայ»։ Բայց ինքը չէր գիտէր
որ վեց ամիսէ ի վեր ճիշդ այդ վեց տողէ
բազկացեալ պաշտօնագիրը կ'ընդօրինա-
կէի շարունակ։ Ասիկա միակ գրութիւնն
էր զոր առանց տառադրութեան և ուսուցչին
օրինակին շատ նման կերպով կրնայի
գրել. երկու վայրկեանի մէջ զայն կը
գրէի, և աւարտելէ ետքը ուրիշ գործով
կ'զբաղէի։ Ուրախ եմ որ Մուսթաֆա Քե-
մալ օսմաներէնի մէջ ունեցած այդ թե-
րութենէն զիս փրկեց՝ արաբական տա-
ռերով թրքերէն գրելը տարազրկելով իր
երկրէն։ Այլ ընթերցողները թող վճռեն
թէ այս մասին եղած ձախտութեան
պատճառը ե՞տ էի թէ Գրիգորեանն էր։

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱՌ ՓՐՈՖ. Յ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Անցեալ տարի մեծապէս ուրախացած
էինք իմանալով ձեր յորեկեանին մօտա-
լուտ տօնակատարութեան լուրը։ Եւ
մինչ կը պատրաստուէինք անոր, որուն
մասնակցիլը պարտականութիւնն էր ու-
րախութիւն կը նկատէինք, մեծ զար-
մանք պատճառեց անոր յետաձգումը։
«Բահնիւմ»-ի միջոցաւ տեղեկանալով
որ անիկա այս տարի Ամերիկա, նեղ
չըջանակի մը մէջ, կատարուած է ար-
դէն, չկրցանք չարտայայտել մեր ան-
կեղծ զգացումները, զոր մեր սրտին մէջ
կը տածենք ձեզի հանդէպ։

Իրապէս 75 երկար տարիներ ապրիլ
կարենալ՝ փափաքելի եւ շնորհաւորելի
է։ Բայց ձեր ազգին եւ մարդկութեան
մատուցած ձեր ծառայութիւնները՝ զե-
րազանցած ըլլալով տարիներու երկա-
րութիւնը երբեք չհամեմատիր անոնց
թիւին հետ. ահա այն պարագան է զոր
կ'ուզենք մատնանշել, եւ որուն համար

Փրոֆ. Գրիգորեան իր եկեղեցական
գործերուն մէջ ունէ մէկուն վերէն չէր
նայէր։ Շատերուն հիացում պատճառած
է վեր. Մ. Փափազեանի հանդէպ անոր
ցուցուցած կարեկցութիւնն ու պաշտ-
պանութիւնը, երբ Փափազեան տակաւին
երիտասարդ և անփորձ գործիչ մը անոր
հօրը բեմը կը զբաւէր։

Տարիներ ետքը, 1902ին, Գրիգոր-
եանի իբր աւետարանիչ ձեռնադրու-
թեան պահուն վեր. Մ. Փափազեան
յիշելէ ետքը թէ իրեն համար որչափ
ծանր է անոր ընկերակցութենէն և զոր-
ծակցութենէն բաժնուիլ, թուեց Այն-
թապի Բ. Եկեղեցիին կողմանէ Թուրքիոյ
Աւետ. բեմերուն և հոգևոր գործին
նուիրուած և զրկուած գործիչները, և
ապա սապէս վերջացուց. «Ահա այս եւ-
կեղեցին այս անգամ ալ իր անկեղծ
սիրտով եւ անհիշատակ զաւակը կը
նուիրէ նոյն գործին և զայն կ. Պոլիս կը զրկէ»։

Բոլոր սրտով ձեզ կը շնորհաւորենք։

Այս վայրկեանիս խոկապէս շուտած
եմ, գրիչս չի շարժիր. մտքիս մէջ ձեզի
յայտնելիք շատ բաներ ունիմ, գործնք
չեմ գիտեր թէ ինչ ձեռով պէտք է յայտ-
նեմ։ Գեղեցիկ բառերով եթէ ձեզ գո-
վաստեմ կը վախճամ ձեր զգայուն սիր-
տը վիրաւորելէ, որ հաճոյք չի զգար
պարծենալէ։ Եթէ ճառեմ այն յատկու-
թիւններէն որ ձեր կեանքը օգտակար
հանգիստացուցած են, կը խորհիմ թէ ա-
սիկա պարզապէս կրկնութիւն պիտի նը-
շանակէ և արեւին՝ «զուն պայծառ և
լուսեղէն ես» ըսելու պիտի նմանի։

Ինծի մեծ ուրախութիւն պատճառած
է ձեզ ճանչնալ նախ՝ իբր ազգական մը,
ապա՝ իբր ուսուցիչ և քարոզիչ մը, մա-
նաւանդ իբր անկեղծ բարեկամ և եղ-
բայր մը։ Չեմ կրնար ըսել թէ ո՞րը ա-
ռաջ կուգայ, ձեզի հանդէպ իմ յար-
գանքս թէ սէրս. բայց հիմա ասոնց



ՓՐՈՖ. ԵՒ ՏԻԿ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, 1888, ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

երկուքն ալ անբաժանելի կերպով իրարու միացած են :

Սկիզբէն ձեր կեանքին մէջ հետամուտ չեղաք նխաժական հարստութեան և փառքի տիրանալու, շատ մը մարդերու նման, եւ աւելի նախընտրեցիք անտեսանելի աշխարհին անկորնչելի յաւիտենական ճշմարտութիւններով զբաղիլ կեանքի այս վաղանցուկ շրջանին մէջ, եւ միեւնոյն ատեն ծառայութեան փշոտ ճամբան ընտրեցիք, որուն մինչև այսօր կը հետեւիք հաստատաքայլ :

Ուրիշներու ծառայելու յատկութիւնը ձեր կեանքին մէջ՝ ջանքի մէկ արդիւնքը չէ, այլ՝ ինքնարեքարար յառաջ եկած վիճակ մը : Ձեր կեանքի պարտէզին մէջ ծառայութիւնը ինքնարոյս ծառ մըն է, որ միշտ անուշաբոյր ծաղիկներով զարդարուած է :

Ուրիշ կէտ մը, որ ձեր անձնաւորութիւնը մեզի սիրելի դարձուցած է, ձեր անկեղծ սիրտը եւ յետին միտքերէ ազատ գործունէութիւնը եղած է : Մարդիկ շատ անգամ որոշ շարժառիթէ

մը գրգռած կը ծառայեն ուրիշներուն իսկ ճշմարիտ ծառայութիւնը պէտք է կատարուի անկեղծութեամբ եւ մաքուր զրդուամով:

Ձեր ծնողներէն ժառանգած ձեր առողջ եւ ամրակալ մարմինը, եւ անոնցմէ ձեզի փոխանցուած հոգեւոր կեանքն ու մաքուր նկարագիրը ձեր մէջ ապահոված են առողջ մտքի եւ տրամաբանութեան գոյութեան տեւականացումը: Ահա այս հաստատ հիմի վրայ ձեր կոռուցած նկարագիրը անտարակոյս ենք թէ շատ օգտակար անձնաւորութիւն մը դարձուցած է ձեզ աշխարհիս համար:

Մինչ հոգեբանութիւն, բարոյագիտութիւն եւ ուրիշ գիտութիւններ կը սորվէինք ձեզմէ, միեւնոյն տակ՝ բարոյական եւ նոյնիսկ ֆիզիկական քաջութեան դասեր կ'առնէինք անզգալաբար: Ահա այս պատճառաւ գոլէճական ընկերներս իրարու մէջ զօրավարութեան պաշտօնին արժանի կը դասէինք ձեզ:

Շատ մը պարագաներու մէջ կը տեսնէինք թէ ճշմարիտ սիրով մը կը սիրէիք ձեր ազգը: 1896ին՝ մինչ աշակերտներս քաղաքի հետ հալորդակցութենէ զուրկ՝ պաշարեալ վիճակի մը մէջ մեր դասերուն կը հետեւէինք՝ Ուրֆայի սարսափելի ջարդին գոյժը Դոլէճ հասաւ, տակաւին մեր յիշողութեան մէջ անմոռանալի կերպով դրոշմուած կը մընայ այդ առթիւ ձեր գրած եղերերը, զոր արոժարալիք աչքերով կարդացած էիք մեզի, եւ որ մէկ կողմէն մէկ պոսթիկումն էր մեր ազգին հանդէպ ձեր տածած նուիրական եւ ջերմ զգացումներուն իսկ միւս կողմէն սուրբ կրակով բորբոքած ձեր սրտին մէկ բողբոջն էր այդ ոճիւրը գործադրուներուն գէմ:

Այս առթիւ մազթելով որ Տէրը բազմիցս արդիւնաւորէ ձեր մատուցած բոլոր ծառայութիւնները, եւ խնդրելով որ Ան ձեզի տակաւին երկար տարիներ շնորհէ, կը մնանք յարգանքներով,
ՏՈՒՐ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉՍ

(Գրեց՝ Վեր. Կ. Բերեկեան)

«Բահնիւմ» իր այս տարուան թիւ 4ին մէջ աւետած էր Փրոֆ. Իրիգորեանի ծննդեան 75րդ տարեդարձը: Այդ առթիւ Իրիգորեանի մեր ազգին մատուցած ծառայութեանց մասին անոր գնահատական տողերը շնորհաւորութեան արժանի են: Ստորագրողս ալ, որ մեծապէս օգտուած է Փրոֆէսորի ուսուցումէն, կեանքէն եւ ծառայութենէն, եւ որ իր բաժինը ունեցած է անոր սեփական մագերը ճերմկցնելու մէջ, համարձակութիւնը կ'ունենամ յայտնելու այն կրթութիւնն ու ազդեցութիւնը չոր անկէ ստացած եմ:

Այս պատկառելի անձնաւորութեան հետ շփուլ ունեցած եմ՝ չորս տարի իբր

իր աշակերտը Կ. Թ. Դոլէճի մէջ, եւ ապա երկար տարիներ զանազան պարագաներու տակ՝ իբր ուսանող իրեն հետ յարաբերութիւնս առաջին անգամ 1885ին սկսած է փրեշեկն կարգի մէջ իրմէ անգլերեն եւ կրեմլը սորվելով, եւ վերջացած է 1896ին մէջ իրմէ հոգեբանութեան, տրամաբանութեան, քրիստոնէական վարդապետութեան եւ հման դասեր տունելով: Դպրոցական շրջանիս մէջ սկսած այս մեր զեղեցիկ յարբերութիւնը, սակայն, տարբեր տեղի եւ տարբեր պարագաներու մէջ մինչեւ հիմա գոյութենէ չէ դադրած: Այն ատեն ինքը, սիրտն ու միտքը նոր գիտութիւններով լիցուցած՝ յարմար վայրեր կը փնտռէր մէջը հոսելու

համար, այն ջոհին նման զոր անոր աւագանը ա՛լ չի կրնար իր մէջ պարու- նակել: Իրեն յանձնուած աշակերտները թուրքիոյ տարբեր քաղաքներէն եւ աւաններէն եկած էին, տարբեր հասակէ, տարբեր սովորութիւնէ և դաւանանքէ մարդիկ էին, զորոնք միևնոյն յարկին տակ լաւ կառավարելու, սնուցանելու եւ կրթելու գործը փրոֆ. Գրիգորեանի և ընկերներուն, Փրոֆ. ք Ա. Պէզճեան, Ս. Լեւոնեան—նման վարչապէտ եւ իմաստուն անձերուն անկ է:

Ուսուցչին տեղգոտ գործունէութիւնն ու եռանդը եւ աշակերտներուն դանդաղութիւնն ու տգիտութիւնը իրարու հետ բաղխումի մէջ էին թէպէտ, ուսուցչին սէրը, հեղութիւնն ու նպատակը սակայն, այս դժուարութիւնը շուտով զիւրութեան կը փոխէին, և անփորձ աշակերտներուն յարգանքն ու սէրը իրեն կը գրաւէին:

Փրոֆէսորին բարեմասնութիւններէն, թերեւս է՛ն կարեւորներէն մէկը, որ աշակերտները իրեն կը հրապուէր, ուսուցած ճշմարտութիւնը իր իսկութեամբը ներկայացնելու ձեւն էր՝ առանց իր անձնական զգացումն ու կարծիքը անոր խառնելու: Անիկա խնդիրը կ'առաջադրէր, անոր թեր ու դէմ փաստերն ու առարկութիւնները կը յայտնէր, և եզրակացութիւնը աշակերտներուն դատողութեան և որոշումին կը թողուր. որպէսզի աշակերտը իր սորվածը գիտակցօրէն իւրացնէր և իրեն համար իրողութեան վերածէր: Անիկա կը տխրէր երբեմն տեսնելով որ աշակերտները՝ իրենց կողմէ չիւրացուած ուրիշներու կարծիքները թուծակօրէն կ'օրինակէին, և անոնց զօրաւոր կերպով կը յանձնարարէր ազատ մնալ այնպիսի արարքէ մը:

Փրոֆէսորը տեսնելով որ աշակերտները դժուարութիւն կը կրեն դասագիրքերը հասկնալու մէջ, անոնց անգլերէն լեզուով ըլլալուն պատճառաւ,

զիւրութիւն մը ընծայելու համար դասախօսութիւնները խմբատիպ պատրաստել կուտար և աշակերտներուն կը յանձնէր. անիկա երբեք սովորութիւնը չունէր մէկ տարուան համար պատրաստուած թուղթերը նոյնութեամբ յաջորդ տարին ալ գործածել, այլ միշտ սրբագրութիւններով և յաւելումներով նորերը պատրաստելէ չէր ձանձրանար: Սյս կերպով անոր ցոյց տուած նկարագիրը և բնութիւնը մեծ ազդեցութիւն ունեցած են շատերուն վրայ, որոնցմէ մէկն է նաև ստորագրեալս:

Փրոֆ. Գրիգորեան նախախնամութեան մեկի շնորհած փառապանծ հանձարներէն մէկը եղած է, որ ոչ միայն դպրոցի մէջ այլ նաև զանազան ձևերով մեծապէս ծառայած է մեր ազգին և եկեղեցիին: Անիկա մեծ գործունէութիւն և մեծ եռանդ ցոյց տուած է ի հարկին թափուր բեմերը անձամբ լեցնելով և Կիրակիները Ս. Գրիգորի դաս տալով, որով շատերուն հոգեւոր կեանքը բարձրացուցած և բարոյականը ազնուացուցած է և այսպէս զանոնք հոգեկան յեղաշրջումի մը ենթարկած է:

Պարզ և հաւատարիմ անհատները արդարութեան և ճշմարտութեան ճամբան կ'առաջնորդէր, ամլութեան դատապարտելով ջանքերը այն չարամիտներուն ուրոնք կապկելով Արեւմտաքի նորահնար դաւանանքները կը նկրտէին մեր ժողովրդին և ուղղափառ հաւատքին մէջ հերձուածներ յառաջ բերել: Անոր այս քայլերուն շնորհիւ շատ մը կրօնական գործիչներու գաղափարներն ու վարդապետութիւնները իրենց սաղմին մէջ կ'սպաննուէին: Վերջերս մեր մէջ երկուան եկած կարգ մը բաժանումները ուրոնք քաղցկեղի մը նման մեր եկեղեցիները կը հիւժեն, իրենց գոյութիւնը կը պարտին Փրոֆ. Գրիգորեանի և ա՛նոր նման հայրապետներուն բացակայութեան:

«Աւետարներ»ի և «Ռահնիւմա»ի իբր խմբագիր մեր ուսուցչին մատուցած ծառայութիւնները օգտակար արդիւնքներ տուած է աւելի ընդարձակ սահմանի մը մէջ: Մանաւանդ օսմանեան սահմանադրութեան հռչակումէն վերջ տարբեր ցեղերէ և ազգերէ շատ մը անձեր հրապուրուած էին անոր յօդուածներէն, որոնք խանութներու և գործավայրերու մէջ կարգացուելով շատերը դէպ ի շէտակ ճամբան առաջնորդած են: Անոր վրութեանց ոճը և նշանակէտը նոյնիսկ շատ մը մոլեռանդ կամ ազատասէր իսլամները հրապուրած են: Այսպէս, պըզտիկ թիւ մը չէն կազմեր զայն կարգացող և անկէ օգտուող ռամիկներն ու տոհմիկները, արհեստաւորներն ու պաշտօնեաները:

Կը յիշեմ բարեկամներէս անկեղծ խալամ միւլֆթի մը, որ իր ձեռքով անոր խմբագրականները կ'ընդօրինակէր և անոնց ընթերցումով հաճոյք կ'ըզար: ասոր չբուականանալով հայատառ թուրքերէն կարդալ սորվեցաւ և «Ռահնիւմա» ի նախապատերազմեան պոյութեան բոլոր շրջանին անոր մէկ սիրող բաժանորդը եղած էր:

Անիկա իր գնահատալի շնորհակալութիւնը յայտնած էր, հիանալով խմբագրին «Երեք թէ Մէկ» խորագրով թերթիկին մէջ գործածուած տրամաբանութեան և փիլիսոփայութեան վրայ: Այս ճշմարտասէր և հաւատարիմ անձին իր ընթերցումովն ու խօսակցութեամբը յայտնած գնահատումը շատ մը մոլեռանդ իսլամները մեծապէս զրգուած էր, և թէպէտ ուղղակի կամ անուղղակի կերպով շատ մը սպառնալիքներու և հալածանքներու ենթարկուած էր սրպէսզի ասկէ հրաժարի, սակայն իր ներքին համոզու մը արտաքին արդիւնքներուն յաղթած էր:

Ամէն տարի անոր թիւերը կազմել տալով իր ամենաթանկագին զրքերուն

մէջ կը դնէր, որոնց մէջէն սակայն ասոր չհանդուրժողները զանոնք գողցած ըլլալով իր զրկումը ցաւով կը յայտնէր: Անիկա միայն մէկ օրինակն է այլացեղ հարիւրաւոր անհատներէն, որոնք մեծապէս կ'օգտուէին «Ռահնիւմա»էն: Միայն երկինքը մեզի պիտի կրնայ յայտնել անոնց արդիւնաբերութիւնը ու պտուղները և հաշուին համագումարը:

Մեր երկրին ու ազգին, մեր ժողովուրդին ու եկեղեցիներուն այսպիսի հաւատարիմ առաջնորդները մեր պատմութեան անուշ յիշատակներն են: Բայց դժբաղդարար յաճախողէպ ջարդերը վաղահասօրէն զանոնք մեղմէ բաժնած են: Միւսնոյն ատեն փառք կուտանք մեր երկնաւոր Հօրը, որ կարծես կրակի մէջէն ազատած և պաշտպանած է մեր այս սիրելի ուսուցչին ու առաջնորդը, որ թէպէտ մարմնով մեղմէ հեռու կը գտնուի, և սակայն սրտով և կարեկցութեամբ մեզի մօտ ըլլալով իր կեանք ու ծառայութիւններովը մեզ կը մխրթարէ:

Մեր տկարութիւնը կը խոստովանինք այս պատկառելի անձին ծառայութիւնները գնահատելու համար մեր մտածումներն ու փափաքները բառերով արտայայտելու մէջ, և կը խնդրենք որ Աստուած, ամէն շնորհաց և բարեաց աղբիւրը, առատ վարձատրութիւններով այս բոլորին փոխարէնը հատուցանէ իրեն: Այսու հանգերձ կ'ուզենք մեր Փրօքէսորը վստահեցնել, թէ իբր իր ծառայութեանց վարձատրութիւնը, անթիւ և թանկարժէք փոխգիրներ իրեն կ'ոպատեն երկինքի մէջ: Բայց երբեք յօժար չենք որ շուտով ստանայ անոնց փոխարժէքը, այլ կը մաղթենք որ տալաւին երկար տարիներ ապրի՝ մեր ազգին իր ծառայութիւնը շարունակելու համար:

Կը մնամ Զեր նախկին և հաւատարիմ սաներէն

(Ստորագրութիւն)

24 Մարտ

ՅՈՒՇԵՐ

(Դրեց՝ Վեր. Յ. Շևրոֆեան)

Տէր Խմբագիր,

Երէկ Ձեզմէ տպեալ յայտարարութիւն մը ստացայ, որուն տակը ինծի կ'առաջարկէր որ Փրոֆ. Գրիգորեանի կեանքէն յիշողութեանս մէջ անացած մանրամասեր գրեմ։ Բայց չատ ալ զիւրին չէ կարճ միջոցի մը մէջ յիշել 39-45 տարուան զէպքերը. և թէ զարմացայ խորհելով որ այսչափ բազմակողմանի անձնաւորութեան մը ո՞ր կողմէն պէտք է գիտել։ Անմիջապէս միտքս եկաւ իմ կարգացած պատմութիւններէս մէկը։ Մեծ գիտուն մը Գորենհակ կ'երթայ Քրիստոսի նշանաւոր մէկ արձանը տեսնելու համար։ Բայց արձանին երեւոյթը զինքը յուսախաբութեան կը մատնէ, երբ առաջին անգամ ներս մտնելով կը տեսնէ զայն։ Հոն գտնուող մանուկ մը անոր մօտենալով ըսաւ. «Տէ՛ր, քիչ մը աւելի մօտեցիր և ծուր գիր որ լաւ տեսնես զայն»։ Գիտունը երբ թելադրութեան համեմատ շարժեցաւ, արձանին գիւղեկութիւնը կրցաւ տեսնել։

1883 ի Սեպտեմբեր ամիսն էր. տասը ընկերներ Այնթապի Բ. Եկեղեցւոյ նախակրթարանին մէջ վարժապետ Ստեփան Եագուպեանի ուսման բոլոր դասընթացքը աւարտելէ վերջ Գոլէճ կ'երթայինք մուտքի քննութիւնը տալու համար։ Մեզ խորհիլ տուող մեծագոյն հարցը սա էր թէ արդեօք Գոլէճի մէջ վեց երկար տարիներու միջոցին մեզի ի՞նչ պիտի սորվէցնէին՝ վարժապետ Ստեփանէն այսքան բան սորվելէ վերջ։ Վերջապէս Գոլէճ հասանք և մեզ Փրոֆ. Գրիգորեանի սենեակը առաջնորդեցին։ Խոշոր գրասեղանի մը ետեւ մեծ թիկնաթուղի մը վրայ կը նստէր փրոֆէսորը, որուն ածիլուած զէմքին վրայ մինչև

ականջները հասնող թաւ պիտիւրը և խոշոր ափնոցները մեզի վախ կ'ազդէին, որ սակայն իր ժպտուն զէմքին ազդեցութեամբ շուտով փարատելով վստահութեան և համարձակութեան փոխուեցաւ։

Մի քանի անգլիերէն բառեր հարցուց, զանոնք հեղիւ տուաւ, և ապա զրեւ տուաւ։ Ասոնցմէ մի քանին կը յիշեմ — սիգրա, պիֆոզ, ձօն, որոնցմէ վերջինը երբեք չկրցանք գրել։ Ասոր վրայ Փրոֆէսորը, «Տակաւին գուք ձեր ուսուցչին անունը չէք գիտեր» ըսաւ կատարեալ շուարուով մատնելով մեզ։

Ապա սկսաւ աշխարհագրութեան քննութեան, և... հարցուց Պոստոնի եւ Նիւ Եօրքի մէջտեղը գտնուող գետակին եւ հինգ լիճերէն փոքրագոյնին անունները։ Երբ դռնէն դուրս ելլանք, «Ասոնք մեր գրքին մէջ չեն գրուած», ըսաւ մեր ընկերներէն մէկը։ «Ինքն ալ չի գիտեր, ինչ որ թերին եկաւ մեզի հարցուց», աւելցուց մէկ երկրորդը։

Վեց տարի փրոֆէսորէն ուսում առնելէ վերջ սորվեցանք թէ հակառակ իր պատկառազգու ու խոշոր մարմնին հեղհամբոյր մէկն է ան, և մեր կարծածէն շատ աւելի բան գիտցող մէկը։

1886-1888ին կուսակցական կեանք եւ նոր տեսակ ազգասիրութիւն մը ծագում առին Գոլէճին մէջ։ Աշակերտներուն միտքը եկած առաջին անձը Գրիգորեանն էր, իբր առաջնորդութեան լաւագոյն թեկնածու։ «Ախ» ըսաւ մէկը, «այս մարդը մէյ մը մեր շարքերուն մէջ մտնէր»։ Կռնակը կարմիր ապա մը, գլուխը եզրապատական ձեւով խոշոր ֆէս մը երկար կապոյտ ծոփով, մէջքը՝ պարսկական շալ մը, իսկ զօտիին մէջ զոյգ մը ատրճանակ... անա այս էր այդ ատենուան գաղափարական ազ-

գտներին երեւոյթը մեր կարծիքին համեմատ:

Սակայն չիք հազուադ ազգասէր մըն էր Գրիգորեան, որ իր ազգին համար բարձր յոյսեր և վսեմ գաղափարականներ կը տածէր սրտին մէջ: Հինգշաբթի օր մը, երբ Դոլէճի առտուան իրատականը տալու կարգը իրենն էր, ըսաւ. «Այսօր ինծի համար շատ տխրատիւթ սրմ'է. քանզի իմ հոգեւոր հայրս Մր. Մօնթ կօմրի, Մարաշի Աստուածաբանականի նախագահը, մեռած է. ախարհ մեծ մարդ կորսնցուց, մեր ազգը՝ իր մէկ բարերարը, բե'մը իր բւմբասացը. ո՞վ պիտի լեցնէ անոր պարագուծիւնը. Ամերիկացի' մը. չեմ փափաքիր, Հա'յ մը, ձեզմէ մէկը պէտք է լեցնէ զայն:»

Ամբողջ ազգին բարձրացումը իր սրտին բաղձանքը եւ քարոզին նիւթն էր: Բ. Եկեղեցիին մէջ, Այնթապ, իր մէկ քարոզին մէջ սապէս ըսաւ. «Այսօր Էպլահանի շուկային մէջէն անցնելու ատեն սոսկալի կերպով հայհոյող մանուկներու հանդիպեցայ, զորոնք Թուրք կարծեցի. բայց երբ հարցուցի հասկցայ թէ անոնք Գրիգոր, Մովսէս, Պօղոս կը կոչուին: Հանգուցեալ եղբօրս Մովսէսի մահը զիս շատ լացուց, բայց այս մանուկներուն համար աւելի լացի: Ես իմ ազգիս զաւակները կ'ուզեմ Մովսէսի, Ս. Գ. Լուսաւորիչի եւ Պօղոսի թողներուն վրայ տեսնել:»

Հաւանականաբար այս էր պատճառը որուն համեմատ Վեր. Փափազեան կիլիկիոյ սոխակը կը կոչուէր, իսկ Գրիգորեան՝ կիլիկիոյ յոյսը:

Գրիգորեան անխոնջ աշխատող մըն էր, որուն զործը միշտ դաստիարակել էր: Դոլէճի մէջ շատ մը դասերով ծանրաբեռնուած ըլլալով հանդերձ՝ ասոնցմէ զատ ամէն կիրակի կը դասախօսէր 200 երիտասարդներէ բաղկացած կիրակնօրեայ դպրոցի մէկ կարգին, և ամիսը մէկ անգամ հոծ բազմութեան մը կը քարո-

զէր Բ. Եկեղեցիին մէջ: Փրօֆ. Ա. Պէզճեան սապէս կ'ըսէր. «Գրիգորեանի քարոզներուն մտիկ ընելու ատեն պէտք է աչքերը գոցել և ուղեղը խիստ ախառանքի մղել, իսկ Փափազեանի մտիկը՝ նեղու ատեն պէտք է աչքերը բանալ և շրթներուն նայիլ:»

Ամէն անհատ, որ անոր հետ շփում մը կրնար ունենալ, գինքը կը սիրէր եւ իր ազդեցութեան տակ կը մտնէր: Այնթապը վերջին անգամ այցելութեանը պահաւն Իրքինաս Թերազգիի Մհարթի սրճարանին մէջ, 2000 թուրքերուն առջեւ՝ տոհմախօսութիւնն մ'ըրաւ, որմէ վերջ կարգ մը զարգացեալ երիտասարդներ մինչեւ իր տունը իրեն ընկերացան եւ երբ իր ստիպումովը ներս մտան իւրեն հարցուցին. «Ո՞ճա էֆէնտի, դուք ի՞նչ կը խորհիք, քրիստոնեայի եւ իսլամի միութիւնը կարելի' է այս երկրին մէջ:» Փրօֆէսորը սա պատմական պատասխանը կուտայ. «Միութիւնը անկարելի է, քանի դուք հայերը կեալը իսկ հայերն ալ ձեզ տանիլ' կը կոչեն: Դուք պէտք էք կրօնական մոլեռանդութիւնը այս երկրէն դուրս վռնտել, տրամաբանօրէն խորհելու և իրողութիւնները տեսնելու վարժուիլ: Մուհամմէտ Արապ մըն է, Յիսուս՝ Հրեայ մը, ուրեմն մեր ազգականները չեն անոնք: Բայց պատմութիւնը լաւ ուսումնասիրեցէք, տեսնելու թէ Մուհամմէտ և Քրիստոս ինչ ըրած են իրենց մտած երկիրներուն մէջ: Մեր առջեւն է 1200 տարուան պատմութիւնը. Մուհամմէտ ի՞նչ ըրաւ Պարսկաստանը, Եգիպտոսը, Թուրքիան. և Քրիստոս ինչի՞ փոխեց Անգլիան, Դերմանիան, Ֆրանսան, Ժամանակի նշանները հասկցէք:»

Գրիգորեանի մեր մէջը գտնուած օրերուն Մկրտականութիւնը Վեր. Շիշմանեանի միջոցաւ և Մորմոնութիւնը Մր. Հէնտզիի միջոցաւ Այնթապ հասնելով եկեղեցիի մէջ մուտ գործեցին: Գը-

րիգորեան անմիջապէս ժողովրդին մէջ մտաւ, Ս. Գրային ուսումնասիրութիւններով, ճառերով և եկեղեցական պատմութեան գէպքերն ու ճշմարտութիւնները յիշելով եկեղեցին փրկեց տառապաշտութենէ և բաժանումէ:

Մինչև այսօր իր մեծագոյն փափաքն է Հայ Առաք. և Աւետ. եկեղեցիները իրարու հանդէպ անկեղծ կարեկցութեան մէջ պահել, որ սակայն կարծուածէն շատ աւելի յոգնութիւն և ջանք պահանջող հարց մըն է: Այս ուղղութեամբ մեծ քայլեր առնողը Փրոֆ. Գրիգորեան ինքը եղած է: Կարատեն մը երբ Աւետ. եկեղեցիներու մէջ տոն չէին նկատուել Մնունգն ու Զատիկը, որոնց ընդունելութիւնը մեծ խռովութեան պատճառ եղաւ Մարաշի Աւետ. եկեղեցիներուն մէջ: Դռներու բանալիի ծակերուն մէջ փայտ պամել, եկեղեցական վանգակներու լեզուակները հանել, զաւազան գործածել պատահական գէպքեր էին:

Կիրակի առաւօտ մը դասէն վերջ քեմ հլաւ եւ հետեւեալ ծանուցումը ըրաւ. «Այս շաբաթ այսինչ օրը Նոր Տարի է: Արշալոյսին եկեղեցին պիտի բացուի և հոգևոր պաշտօն պիտի կատարուի մեր սովորութեան համեմատ: Շնորհաւորումները կրնանք այս շէնքին մէջ կատարել. եկեղեցական պաշտօնէն հտքը ամէն ոք կրնայ իր գործին երթալ: Քիչ վերջը Մնունգի տօնը կը հասնի. շնորհաւորական այցելութիւնները այն ա-

տեն պիտի կատարուին մեր ազգակիցներուն հետ միասին»: Մերունի մը տոքի ելլելով ըսաւ. «Փրոֆէսոր, զաւակս, մենք այս տօներու համար նախաառեցանք, ծեծուեցանք, ինչպէ՞ս ես գէպի սնոնց պիտի դառնանք: «Հայրիկ», պատասխանեց փրոֆէսորը, «մենք հոս խորհրդակցութիւն չպիտի կատարենք. եկեղեցիի կրօնական ժողովը այսպէս որոշեց. բայց դուն տօնելու կամ չտօնեմէջ ազատ ես:»

Այսօր ամէն Այնթապցի նախ փրոֆէսոր և ապա վերապատուելի Յ. Գ. Գրիգորեանի ազգեցութիւնը կ'զգայ իր սրտին և մտքին մէջ և երախտագիտական զգացում կը տածէ անոր հանդէպ: Ան՝ 1895 էն սկսեալ տարիներով Առաք. եկեղեցիին մէջ հիանալի քարոզչի տուաւ որոնք ապարդիւն չմնացին ժողովուրդը լուսաւորելու և համաձայնութիւնը դիւրացնելու մէջ: Մեր բոլոր ազգակիցներէն աւելի մտաւորապէս և կրօնապէս աւելի լայնամիտ են Այնթապցի Հայերը, որոնք՝ այս կը պարտին Փրոֆ. Ա. Պէզճիանի, Փրոֆ. Ս. Լեւոնեանի, Վեր. Մ. Կ. Փափագեանի, Փրոֆ. Զ. Պէզճեանի, Տիար. Վ. Քիւրքճեանի, Տէր Ներսէս Թաւադճեանի և Փրոֆ. Յ. Գ. Գրիգորեանի նման անձերու:

Կը մաղթենք որ Գրիգորեան ապրի ուրախանալու համար՝ տեսնելով իր հոգւոյն պտուղները:

Զահլէ, 22 Մարտ.

ԻԶՆՊԷՍ ԿԸ ՃԱՆՉՆԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ

(Գրեց՝ Վեր. Ե. Հասթեսան)

Մանկութենէս իվեր կը ճանչնամ Փրոֆէսորը, որ այդ ատենէն սկսեալ մեծ ազգեցութիւն ունեցած է վրաս: Տակաւին կը յիշեմ իր եռանդոտ երգեցողութիւնները և որոտացող ձայնով սկսած քարոզները, զոր կը լսէի Նոր Տարուան

առթիւ կամ ուրիշատիներ մօրս ընկերակցութեամբ եկեղեցի գացած պահուն՝ մինչ տակաւին ես 7—8 տարեկան էի:

Շատ կարեկից սրտով ուսուցիչ մըն էր: Աշակերտներուն նիւթական, մտաւորական և հոգեւոր դժուարութիւններ

ըլ լուծել կ'աշխատէր ան, շատ մօտ երթալով զանոնք իր սենեակը կը հրաւիրէր, ուր անոնց հետ կը խօսակցէր իրենց դժուարութիւններուն մասին: Ձանձրանալ և յոգնիլ չգիտցող մէկն էր: Այնպիսի ատեն մը, երբ հոգեւոր մտածումները զիս զօրաւոր կերպով կը վրաւէին, զիս իր սենեակը կը տանէր և համբերութեամբ ինծի հետ կը խօսակցէր ինծի ուղղութիւն մը տալու համար: Օր մը մինչ հոգեւոր զգացումներուն զիս սաստկօրէն յուզած մէկ պահուն, Գոլէճի շէնքին քով կայնած էի, ինծի մօտենալով ըսաւ. «Ենովք, ինչո՞ւ կայներ ես հոս, գնա՛ գուն ալ խաղա»:

Գոլէճի մէջ աշակերտներու վրայ ամենէն աւելի ազդեցութիւն ունեցող ուսուցիչը ինքն էր, պահանջին համեմատ խրատը և պատիժը չէր խնայեր: Գոլէճի դրսի սրահին մէջ բարձր կարգի աշա-

կերտներէն մէկուն ապտակ մը զարկաւ, որուն շառաչիւնը տակաւին ականջիս մէջ կը հնչէ:

Ճշմարտութեան հաւատարիմ ուսուցիչ մըն էր, որ չէր վախնար զայն ապրելէ և չէր վարաներ զայն խօսելէ:

Որոշ և յստակ համոզումներ ունէր, գիտցածը լա՛ւ գիտէր, գորոնք կրնար իր հասկցածին համեմատ և գիւրութեամբ ներկայացնել: Անիկա չէր վախնար ամէն միջոց և կերպը գործածելէ ճշմարտութիւն մը աշակերտին մտքին մէջ դրոշմելու համար:

Փրոֆէսորը իրապէս միշտ երիտասարդ, յստակ գաղափարի տէր իմաստասէր մը, լայնամիտ, մեծասիրտ և անկեղծ մարդ մը, ճշմարիտ բարեկամ մը, Աստուծոյ հաւատարիմ մէկ հաւատացեալն է:

ԾԱՌԱՅՈՂ ԿԵԱՆՔ ՄԸ

1895 յոյ. մեկի, Այնթապիներուն, համար անմոռանալի ջարդի թուական մըն է, որ մարդերու խսկութիւնն ու նըկարպիւրը երեւան հանող սեւ եւ տագնապալից օր մըն է: Այս առթիւ Փրոֆ. Յ. Գրիգորեանը կը գանհնք իբր անկեղծ ազգասէր մը, հաւատարիմ իր գաղափարականին և նպատակին: Այն օրերուն՝ երբ Հայերը կ'սպաննուէին և անոնց ինչքերը կը կոզոպտուէին, շատերուն կողմանէ բաղդ մը, այո ճարպիկութիւն մը կը նկատուէր մօրթը վրտանգէ աղատել, օտոր հաստատութեան մը մէջ ապաւինելով: Այդ ատեն ազգին բացառիկ բաղդաւորներուն մէջ կը զբոսնուէր Փրոֆէսորը, որ իր բնատնիքով միտաին Գոլէճի շրջափակը շէնքի մը մէջ կը բնակէր, որ անմատչելի էր Թուրքի կայինին ու հրացանին, դաշոյնին ու սուրինին: Այսպիսի պարագայի մը մէջ քաղաքաբնակ ամէն անձ կը փափաքէր

այդպիսի տեղ մը ապաստանիլ, եթէ կարելի ըլլար: Բայց բոլոր ժողովուրդը չըկրցաւ իր հիացումը զսպել երբ իր մէջ տեսաւ Փրոֆ. Գրիգորեանը, այս քառանդամեայ եւ եօթը տարիէ ի վեր ընտանիքի տէր մարդը, իր անկեղծ բարեկամին և հաւատարիմ ընկերին, Վեր. Ս. Փափաղեանի հետ, որոնք իրենց սըրտին մէջ առկայծ սէրէն եւ ծառայութեան ոգիէն մղուած որոշեցին իրենց ազգակիցներուն բաղդակից ըլլալ, հըրաժեշտ տալով իրենց սիրելիներուն իրենց ապահով բերդերէն զուրս ելան եւ քաղաք եկան: Այս ինչ անակնկալ դէպք մըն է, ինչ արկածախնդիր արարք մըն է, այս ինչ զարմանալի տեսարան մըն է. բոլոր ժողովուրդը զարմացած կը հարցնէր. «Ինչո՞ւ, ինչո՞ւ ձեր ապահով տեղերը ձգելով հոս եկաք»: Իսկ անոնք առանց երկիւղի բայց առանց հպարտանալու կը պատասխանէին. «Այսօր օգ-

նութեան, ծառայութեան օրն է, մենք եկանք մեր ազգին հանդէպ մեր պարտականութիւնը կատարելու:» Այսպիսի անկեղծ և պարտաճանաչ ոգիի մը առջև բոլորն ալ լուռ և հիացած ըսկըսան արցունք թափել: Անմիջապէս զործի սկսան վիրաւորները դարմանելու և պատսպարելու, անօթիներուն և թըշուռառացածներուն նպաստ գտնելու, իրենց սիրելիները կորսնցուցած, յուսահատած, հաւատքը խախտած հոգիները մխիթարելու, քաջալերելու, կորով ներշնչելու համար աշխատեցան, միջոցներուն զիմեցին ու յոգնեցան: Նոյն իսկ Պետրոսի փորձութեան ենթարկուող անհատները և հայկական կեդրոններէ հեռու մնացած լքեալ հոգիները բարոյական պարտութենէ փրկելու համար իրենց ձայները մինչև անոնց հասցուցին: Այսպէս ասոնք իրենց այս զործունէութեամբ շատ լուր կ'արտայայտէին այն ազնիւ հոգին զոր կը գտնենք Երեմիայի սատղերում. «Երանի թէ զլուսա ջուր և աչքերս արցունքի աղբիւր ըլլային, որ ես ցորեկ ու գիշեր իմ ժողովուրդիս աղջկան սպաննուածներուն համար լալի:» Ծիշդ այս առթիւ տեղական կառավարութեան անձամբ դիմելու համար երկու մարդերու պէտք տեսնուեցաւ: Փրոֆ. հոս ալ դարձեալ յառաջ նետուելով երբեք չվարանեցաւ «Անոնցմէ մէկը իմ հայրս թող ըլլայ» ըսելու: Որոշուած կրօնականներէն երկրորդը երբ սկսաւ վախի նշաններ ցոյց տալ՝ առարկելով որ եթէ երթան զիրենք կ'սպաննեն փրօքէսորը անմիջապէս ծնրադիր պատասխանեց. «Այո, մենք, առաջ մե'նք պէտք է մեկնինք:»

Անիկա ոչ միայն տեսնող, գտնող, գիտցող եւ համարձակօրէն յայտարարող էր թէ մեծութեան գաղտնիքը ծառայելու մէջ է, այլ նաեւ զանիկա իր կեանքին մէջ իրապէս ցուցնող մէկն էր: Այսօր Փրոֆ. Գրիգորեան մեզի ալ ըսել

կ'ուզէ թէ ապրիլ փափաքող ազգի մը գոյութիւնը կարելի է անչահախնդիր ծառայութեան ոգիով լեցունել և մեռնելու պատրաստ մարդերու գոյութեամբը միայն: «Ահա իրաւցնէ Խորայեւացի մը, որուն ներսը նենգութիւն չկայ:»

Լ. Ա. ԼԵՒՈՆԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ

Ազգայնաբանութիւն Չարլս Տիլմանի
գրուածներէն

ԳԼՈՒԽ Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՈԳԻՆ

Ան իր ամէն ատենուան սենեակին էր, ատոր տարակոյս չիկար, սակայն ինչ՞ զարմանալի փոփոխութիւն, պատերն ու առաստաղը կենդանի կանանչ բուսակա-նութեամբ զարդարուած, կատարեալ պուրակի մը հրապուրիչ գեղեցկութիւնն ունէին, ծաղիկներու պտուղներ ալ աւելի կը քաղցրացնէին տեսարանը: Կրակարանին մէջ խոշոր դէպ մը անուշահոտ փայտ ճարճատելով իր ախորժելի ջերմութիւնը կը տարածէր սենեակին ամէն կողմը, խեղճ կրակարան, բոլոր անցնող տարիներու մէջ ե՞րբ տեսած էր ասանկ փառաւոր առատ կրակ...: Մեծ սեղանը սենեակին ճիշդ մէջտեղը դրուած էր, ու վրան արքայազնի ճաշը պատրաստ կը կենար, խոշոր կարմըրած հնդկահաւը մէջտեղը ըլլալով խորոված հաւեղէններու և որսի կենդանեաց զանազան ախորժահամ միսերու բազմութեան մէջ, պտուղներու ճաշակաւոր զանազանութիւն մը պատրաստուած խոշոր հիւթեղ նարինջներու, շագանակներու, կարմիր խոշոր խնձորնե-

րու, քաղձրահամ տանձերու, ու քաղցր ըմպելիներու վերեւ բազմած էր ալեւոր ծերունի մը՝ որ իր կանանչ վերարկուով, ճերմակ մուշտակով, կարմիր զէմքով, փայլուն աչքերով, զուարթ նայուածքով ու հակայ մարմնով այդ հրաշալի կոչունքին տանտէրը ըլլալ կը թուէր:

«Ներս եկուր», զօչեց Ոգին, «եկուր, և թերեւս զիս աւելի լաւ ճանչնաս»:

Սքրուճ ներս մտաւ, աչքերը գետին խոնարհած կեցաւ անոր առջեւը: Ու թէն հսկային զէմքը քաղցր ու նայուածքը բարի էր, բայց Սքրուճ չէր համարձակեր անոր աչքերուն նայիլ:

«Ես ներկայ Ծնունդին ոգին եմ, ինծի՛ նայէ», ըսաւ ոգին:

Սքրուճ վախով և խորունկ յարգանքի զգացմամբ անոր նայեցաւ:

«Ասկէ առաջ զիս տեսա՞ծ ես», հարցուց ոգին:

— Երբեք, պատասխան տուաւ Սքրուճ:

«Իմ ընտանեացս միւս անդամներուն հետ յարաբերութիւն չունի՞ս»:

— Ձեմ կարծիք թէ զանոնք տեսած իսկ եմ: Անոնք ո՞վ են:

«Միայն եղբայրներս 1800ի չափ կան»:

— Ի՞նչ մեծ ընտանիք, Աստուած իմ, ատոնց ապրուստին համար չափ դրամ պէտք է, յարեց Սքրուճ:

«Հոս եկուր», ըսաւ ոգին, «Եւ զգեստէս բռնէ»:

Սքրուճ հնազանդեցաւ, և հագին անոր զգեստին դպաւ, երբ անմիջապէս սենեակը, կանանչութիւնները, սեղան, կերակուր և տմէն ինչ աներևութեան, ու ակնթարթի մը մէջ անոնք ինքզինքնին զատան փողփղը...

Ծնունդի առաջածն էր, և որտ, շատ ցուրտ, թէն արեւ կը փայլէր, ամէն տան տանիքէն մարդիկ ձիւնը քերելով վար փողփղը կը թափէին, ուրիշներ փողփղի տուններու առջեւէն ձիւնը մէկ կողմ ընկելով ճամբայ կը բանային: Այս խայթոշ ցուրտը կար, բայց մարդիկ ուրախ

կ'երեւային, տանիքէ տանիք իրարու զըւարթ կատակներ ու երբեմն ալ ձիւնի զնդակներ կը նետէին, ու կը փոխադարձէին քրքջալիլ խնդալով:

Ձէ՞ որ Ծնունդ էր:

Շատ չանցած եկեղեցիին զանգակը հնչեց, ու բարեպաշտ մարդիկ, ուրախ զէմքերով և իրենց ամէնէն լաւ հագուստներն հագած եկեղեցի կ'երթային մեծ բազմութեամբ:

Այնուհետեւ խումբ խումբ մարդիկ ևս կ'երևին որոնք իրենց այն օրուան ճաշը փուռը կը տանէին եփել տալու համար: Ոգին ատոնցմով շատ հետաքրքրուեցաւ: Սքրուճի հետ միասին զացին կայնեցան հաղագործի մը խանութին դուռը, և Ոգին իրաքանչիւր անցորդին կերակուրի ծածկոցը կը վերցնէր ու ձեռքի խորհրդաւոր սրուակին անուշահոտ հեղուկէն քանի մը կաթիլ կը կաթեցնէր անոր մէջ: Այս հեղուկը շատ զարմանալի յատկութիւն մը ունէր, երբ փուռը եկողներէն ոմանք կարգի համար իրարու հետ կը կռուէին, Ոգին քանի մը կաթիլ իր սրուակէն անոնց ամանը կաթեցուցածին պէս մարդիկը կը մեղմանային, իրարու կը ներէին ու կ'ըսէին. «Այսօր Ծնունդ է, ինչո՞ւ իրարու սիրտ ցաւցընենք, միթէ Ծնունդի օրը ամօթ չէ՞ կըուելի»:

«Այս հեղուկը մասնաւոր համմը ունի՞», հարցուց Սքրուճ:

— Սյո, իմ համա, պատասխանեց ոգին:

«Ամէն կերակուրի կը յարմարի՞»:

— Անչուտ, մանաւանդ աղքատներու կերակուրին:

«Ինչո՞ւ մանաւանդ աղքատներուն»:

— Որովհետեւ անոնք աւելի պէտք ունին անոր:

(Շաքունակելի) (16)

صاحب الامتياز و مدير المسؤول

قيس قريبت هاروتونيان